



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 հոկտեմբեր 2017 թ. № 199 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի
հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հրամայում
եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն
մարզիկներ» մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի
Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում
մարզական լրագրողների հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2017 թվականի նոյեմբերի 1-ից:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) մարզական լրագրողների հավատարմագրման կանոնները:

2. Մարզական լրագրողի հավատարմագրումն իրականացվում է սույն կարգին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի նոյեմբեր ամսին՝ Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» տվյալ տարվա մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար: Հավատարմագրման ժամկետն է՝ հավատարմագրման օրվանից մինչև մրցույթի քվեարկության համար սահմանված ժամանակահատվածի վերջին օրը՝ քվեարկության ավարտը:

3. Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի քվեարկության համար կարող են հավատարմագրվել միայն մարզական լրագրողները, որոնք տվյալ տարում ունեն առնվազն 10 իրադարձային կամ վերլուծական հրապարակում և որոնք ներկայացնում են (աշխատում կամ թղթակցում են) առնվազն մեկ տարվա պատմություն, 2000 տպաքանակ (տպագիր մամուլի համար) և 3000 միջին օրական այցելություն (էլեկտրոնային լրատվամիջոցի համար) ունեցող լրատվամիջոց: Յուրաքանչյուր լրատվամիջոցից քվեարկությանը մասնակցելու համար կարող է հավատարմագրվել առավելագույնը 1 մարզական լրագրող՝ բացառությամբ ստորև նշվող դեպքերի.

1) հայկական սպորտը լուսաբանող առնվազն շաբաթական պարբերականությամբ վերլուծական ծրագիր/հաղորդում ունեցող հեռուստաընկերությունից քվեարկությանը մասնակցելու համար կարող են հավատարմագրվել առավելագույնը 3 մարզական լրագրող,

2) լուրերի բլոկում հայկական սպորտը լուսաբանող առանձին ծրագիր ունեցող հեռուստաընկերությունից քվեարկությանը մասնակցելու համար կարող են հավատարմագրվել առավելագույնը 2 մարզական լրագրող,

3) հայկական սպորտը լուսաբանող առնվազն 2000 տպաքանակով հրատարակվող զուտ սպորտային տպագիր լրատվամիջոցից քվեարկությանը մասնակցելու համար կարող են հավատարմագրվել առավելագույնը 3 մարզական լրագրող,

4) հայկական սպորտը լուսաբանող առանձին սպորտային բաժին ունեցող առնվազն 5000 տպաքանակով հրատարակվող տպագիր լրատվամիջոցից քվեարկությանը մասնակցելու համար կարող են հավատարմագրվել առավելագույնը 2 մարզական լրագրող,

5) հայկական սպորտը լուսաբանող առնվազն 3000 միջին օրական այցելություն ունեցող զուտ սպորտային էլեկտրոնային լրատվամիջոցից քվեարկությանը մասնակցելու համար կարող են հավատարմագրվել առավելագույնը 3 մարզական լրագրող,

6) հայկական սպորտը լուսաբանող հատուկ բաժին ունեցող առնվազն 5000 միջին օրական այցելություն ունեցող էլեկտրոնային լրատվամիջոցից քվեարկությանը մասնակցելու համար կարող են հավատարմագրվել առավելագույնը 2 մարզական լրագրող:

4. Մարզական լրագրողները հավատարմագրվելու համար պետք է մինչև տվյալ տարվա նոյեմբերի 30-ը համապատասխան դիմում ներկայացնեն Նախարարություն՝ Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ հաստատված լրատվամիջոցի ղեկավարի կողմից՝ նշելով սույն կարգի 3-րդ կետի (նույն լրատվամիջոցից մեկից ավել մարզական լրագրող հավատարմագրման ներկայանալու դեպքում՝ նաև 3-րդ կետի) որևէ ենթակետի պահանջը բավարարելու մասին, ինչպես նաև՝

1) լրագրողի ներկայացրած լրատվության միջոց(ներ)ի անվանում(ներ)ը, գտնվելու վայրը՝ հասցեն, և հավատարմագրվող մարզական լրագրողի՝ ըստ անձնագրի ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում) և բնակության վայրը (հասցեն),

2) լրատվական գործունեություն իրականացնողի և մարզական լրագրողի էլեկտրոնային հասցեները, հեռախոսահամարներն ու հեռապատճենների համարները (եթե դրանք կան),

3) 3 x 4 չափսի մեկ լուսանկար:

5. Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» տվյալ տարվա մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար մարզական լրագրողների հավատարմագրման համար վարվում է առանձին հավատարմագրման մատյան:

6. Նախարարությունը սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո այն անմիջապես գրանցում է լրագրողների հավատարմագրման մատյանում, որտեղ